

ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂԻ ՀԱՅՏՆԱՍ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

VІ դարի վերջերի և VІІ դարի սկզբների հայ Լեկեղեցական ու մշակութային գործիչ, 604—607 թթ. կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերթողի «Ցաղագս պատկերամարտից» մեծարժեք երկր պարունակում է հայ եկեղեցու որդեգրած պատկերաճարգության դավանարանական հիմնական դրույթները, միաժամանակ հանդիսանալով «...պատկերամարտների դեմ որևէ լեզվով դրված ամենահին դրույթունը»¹։

Բազմաթիվ փաստարկներով առարկելով պատկերամարտական հայացքներ ունեցող իր ընդդիմախոսներին, Վրթանես Քերթողը նաև հետևյալ տեղեկությունն է հայտնում. «Եւ դրեալ էր թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ։ Այդ ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք։ Քանզի ի Հայք պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ, բայց ի հռոմվոց բերէին, և մեր ուսմունք անտի էին և եթե նոքա չէին կորուսեալ, և քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին, և պատկերս և նկարս առնէին յեկեղեցիս յայնուն Քրիստոսի, և դարձեալ զինի Պապայ և այլ թագաւորք եղեն ի Հայս, և հայրապետք՝ զպէս Լրանելին սուրբն Սահակ և Մեսրոպ և Եղեղիկ և Արծաւն և Կորիւն և ընկերք նոցա, որ և ի ձեռն իսկ նոցա Հայոց դպրութիւն շնորհեցաւ ի Տեառնէ Աստուծոյ. և ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց և նկարաց եկեղեցւոյ բանս ինչ ոք արար...»²։

Այս հատվածի ճիշտ մեկնարանությունն առաջին փորձը կատարել է Ս. Տեր-Ներսեսյանը՝ Փափստոս Բուզանդի պատմության մեջ Պապի մասին եղած որոշ վկայություններից ելնելով նա իրավացիորեն գտնում է, որ այս թագավորի տիրապետության շրջանում (369—374 թթ.) նկատվել է մասնակի վերադարձ դեպի հեթանոսական ծեսերն ու սովորությունները, և հենց այդ Լերույթի հետ է կապված պատկերամարտների պնդումը Պապի ընդգծված պատկերապաշտության մասին (իսկ պատկերապաշտությունը նրանք համարում էին եղապաշտու-

թյուն)³։ Պատկերների Բյուզանդիայից բերվելու վերաբերյալ Ս. Տեր-Ներսեսյանը գրում է. «Արդյո՞ք տառացիորեն պետք է հասկանալ հեղինակի այն նշումը, թե մինչև այդ «ի Հայք պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ, բայց ի հռոմվոց բերէին»։ Եթե, ինչպես հավաստում է հեղինակը, ճշմարիտ է, որ շատ դարերից ի վեր եկեղեցիները զարդարվում էին նկարներով, ապա անհասկանալի է մնում, թե ինչու՞ չի ստեղծվել հայ նկարիչների մի դպրոց, մանավանդ որ այդ ժամանակաշրջանի քանդակագործությունն իր ազգային բնույթով հիմնովին տարբերվում է բյուզանդական ոճից, Թերեւս հեղինակն ընդհանրացնում է առանձին դեպքերում նկատվածը»⁴։

Ստորև կտեսնենք, որ մեջբերված դրույթը («ի Հայք պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ...») պատկանում է ոչ թե Վրթանես Քերթողին, այլ պատկերամարտներին, որոնց կտրականապես առարկում է հեղինակը։ Օսկայն ծանոթանանք նաև այս կապակցությամբ բոլորովին վերջերս հայտնված մեկ այլ կարծիքի հետ՝ Ա. Ս. Սահակյանը «Ցաղագս պատկերամարտից» Լրկից բերելով Պապի մասին եղած հատվածը, գրում է. «Մեջբերված սույն հատվածից տեղեկանում ենք, որ պատկերների պաշտամունքը Հայաստանում սխալմամբ կապում էին հայոց Պապ թագավորի ժամանակ (369—373 թթ.) Հայաստանում վերաբնացած կռապաշտության հետ... Վերաբնե Քերթողն ասում է, որ իսկական քրիստոսյան պատկերներ մեր եկեղեցիներում եղել են նաև Պապից առաջ և հետո, և ու պատկերները Հայաստան են մուծել բյուզանդացիները այն ժամանակ, երբ դեռ քաղկեդոնական մալոուրյան մեջ չէին ընկել, և «մինչև ցայժմ» էլ հայերը պատկերներ ստեղծել չգիտեին, իսկ Պապից հետո, ինչպես բացատրում է Վրթանես վարդապետը, հայոց հայրապետներն ու հայ դպրության շահակիր վարդապետները ոչինչ չեն ասել պատկերների դեմ... (ընդգծումները մերն են—Վ. Մ.)»⁵։

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում, էջ 20։

⁵ Ա. Սահակյան. Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2, էջ 162։

¹ Ս. Տեր-Ներսեսյան. VІІ դարի մի երկ նվիրված պատկերների պաշտպանությանը.— Հայ արվեստը միջնադարում. Երևան, 1975, էջ 7։

² Տե՛ս նույն տեղում, էջ 13—14։

Վրթանես Բերթողի երկի համեմատական ընթերցողը և աշխարհարար թարգմանությունը 1970 թ. հրատարակած Նովանդ Մելքոնյանը, ընդարձակ առաջարկում միանգամայն ճիշտ է մեկնաբանել մեզ հետաքրքրող հատվածը։ Նա գրում է. «Այդ ամենեցուն յայտնի է թե սուտ խօսիք» նախադասությունը միջանկյալ է, իսկ «տարաւ»-ին իմաստային տեսակետից անմիջապես հաջորդում է «քանդի»-ով սկսված նախադասությունը, որով ստացվում է այսպես. «Որ դրեալ է թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ, քանդի ի Հայս պատկերս որ չգիտեր առնել մինչև ցայժմ», բայց ի հոռոմսց բերէին»։ սա կլինի պատկերամարտների առարկությունը, որին հակադրվում է հեղինակը, ասելով. «Այդ ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք»⁶։ Մի ուշագրավ հանգամանք էս։ Պատկերամարտները ոչ միայն պատկերապատկերություն են Բյուզանդիայի հետ կապում, այլ նաև շարամտորեն ակնարկում են հայ դպրության, մշակույթի (արվեստի) մասին՝ «և մեր ուսմունք անտի էին ևթէ նոքա չէին կորուսեալ»։ Հենց այս

դրույթին է հիմնավորապես առարկում Վրթանես Բերթողը, երբ հիշատակում է Սահակին ու Մեսրոպ Մաշտոցին իրենց աշակերտներով, և գրում, թե «և ի ձեռն իսկ նոցա Հայոց դպրութիւն շնորհեցաւ ի Տեառնէ Աստուծոյ...»⁷։ Այսինքն հայոց «ուսմունքն» ու «դպրութունը» որ թե «անտի էին»՝ օտարամտ, այլ շնորհված են աստուծու կողմից՝ Սահակի, Մեսրոպի և մյուսների ձեռքով (ընդ որում, այն ժամանակ, երբ դեռ «նոքա» (հույները) չէին կորուսեալ)։ Ուստի բնական է Վրթանես Բերթողի վրդովմունքը, երբ խոսքի սկզբում միջանկյալ նախադասությամբ շեշտում է՝ «սուտ եք խօսում», իսկ նույն պարբերության վերջում երկրորդում է ասվածը. «կողմն հերձուածողաց...»։ Ըստ էության խամրի վասնզի զստութիւն խօսին. դի և մեղք իսկ առաջին ի ստութենէ ծնան»⁸։

Այսպիսով, եթե երկի հիշյալ հատվածում տարանջատենք պատկերամարտների և Վրթանես Բերթողի դրույթները, հետևյալ պատկերը էստացվի.

Պատկերամարտների հարցադրումը

1 ...Զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ...

2 ի Հայս պատկերս որ չգիտեր առնել մինչև ցայժմ բայց ի հոռոմոց բերէին, և մեր ուսմունք անտի էին և եթե նոքա չէին կորուսեալ...

Վրթանես Բերթողը Պապի վերաբերյալ ասվածին մանրամասնորեն է պատասխանում, քանի որ շատերին կարող էր հայտնի չլինել իրողությունը։ Մինչդեռ «ի Հայս պատկերս որ չգիտեր առնել մինչև ցայժմ» պնդումը իր ժամանակի համար ամենեցուն յայտնի է կեղծիք էր, որին պատասխանելու կարիքն էլ չկար։ Եթե այսօր մեզ հայտնի են IV—VII դդ. շուրջ լորս տասնյակ⁹ հայկական որմնանկարազարդ

Վրթանես Բերթողի պատասխանը

Եվ քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին և պատկերս և նկարս տանէին յեկեղեցիս... և դարձեալ զկնի Պապայ և այլք թագաւորք եղին ի Հայս և հայրապետք... և ոչ որ ի նոցանէ վասն պատկերաց և նկարուց եկեղեցոյ րանս ինչ ոք արար։

Այդ ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք... Սուրբ Սահակ և Մաշտոց և Եղիշիկ և Արձան և Կորին և ընկերք նոցա որ և ի ձեռն իսկ նոցա հայոց դպրութիւն շնորհեցաւ ի Տեառնէ Աստուծոյ...⁹։

Եւ խճանկարազարդ հուշարձաններ, ապա Վրթանես Բերթողին ու իր ժամանակակիցներին շատ ավելին էր հայտնի։ Յաղագս պատկերամարտիցս երկում հեղինակը նշում է. «Եւ մեք... յանուն Աստուծոյ նկարեմք...» և մեք զնոյն նկարեմքս¹⁰։ Եւ ուսում է պատկերվող թեմաների մասին, ընդ որում նաև այնպիսիների, որոնք

6 Ե. Մելքոնյան. Վրթանես Բերթողը և պատկերամարտությունը. — «Էջմիածին», 1970, 2—է, էջ 89։

10 Л. Дурново. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, с. 7—13; Н. Котанджян. Цвет в ранне-

7 Նույն տեղում, էջ 93։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում։ Հոգվածի սկզբում երկից բերված բաղվածքը վերցված է Ս. Տեր-Ներսիսյանի գրքից, իսկ հետագա մեջբերումներում օգտագործել ենք է. Մելքոնյանի կազմած համեմատական բնագիրը։

11 Ե. Մելքոնյան. նշվ. աշխ., էջ 90։

զուտ հայկական ծագում ունեն¹², անգամ անդրադառնում է ներկերի բաղադրությանը: Այս ամենը հայկական կերպարվեստի զարգացման մասին ոչ մի կասկած չի թողնում: Թեև ավելի էականն այն է, որ մեր օրերն են հասել հայ վաղ միջնադարյան մի շարք որմնանկարներ, որոնք աչքի են ընկնում պատկե-

րագրական տեղական առանձնահատկություններով, իսկ դրանց մի մասն ունի նաև հայերեն գրություններ, արված հենց որմնանկարի ներկով, մի բան, որ միայն հայ վարպետը կարող էր անել:

Այսպիսով, ցանկալի է, որ Վրթանես Գերթոյի «Ցաղագս պատկերամարտից» երկի քննված հատվածը այսուհետև ներկայացվի ճիշտ մեկնաբանությամբ, մանավանդ, որ նման կարգի վրիպումները նպաստում են ընդհանրապես հայկական որմնանկարչության գոյությունը ժխտող տեսակետների առաջացմանը (ն. Թիերի և ուրիշներ)¹³, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում պատմական իրողությանը: Եվ վերջապես հարկ է, որ Վրթանես վարպետը ազատվի իր իսկ ընդդիմախոսների թյուր պնդումների հեղինակ համարվելուց:

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

средневековой живописи Армении. Ереван, 1978, с. 9—10, 13—15; Հայ ժողովրդի պատմություն. հ. II, Երևան, 1984, էջ 601—609, Կ. Ղաֆազյան. Դվին քաղաքը և նրա թղթամաները. հ. I, Երևան, 1952, էջ 39, 91—92, 98; Վ. Գրիգորյան. Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները. Երևան, 1982, էջ 77; Ս. Մարտիրոսյան. Խորագույն Հայք. Երևան, 1978, էջ 32—33, Կ. Մաթևոսյան. Լճատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը.—«Էջմիածին», 1982, Դ, էջ 53—55 և այլն:

12 «...տեսանեմք նկարեալ զսուրբն Գրիգոր և աստուածահաճոյ շարչարանք իւր... զերանելի և զսուրբ կանայսն զԴայանէ և զՀռիփսիմէ հանդերձ ամենայն սուրբ ընկերօք և յաղթող նահատակ: Նույն տեղում, էջ 92:

13 Այս մասին տե՛ս И. Дрампян. К вопросу о датировке и интерпретации фресок Кобайра.—Кавказ и Византия. Вып. 4, Ереван, 1984, с. 194—217.

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ «ՄԱՑՆԵ» («ԼՐԱԲԵՐ») ՀԱՆԴԵՍԻ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ
(1986—1987 թթ.)*

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵԱՐ

1986 թ.

№ 1

Р. К. Киласов, Великий сын турецкого народа—Мустафа Субхи, 25—36.

В. Б. Виноградов, Т. Н. Нераденко, К вопросу о южных связях кобанских племен (бронзовые оружия и орудия труда). 37—57.

Ջոնյո Ղալաթլի, Կախեթի քաղաքների պատմական աշխարհագրությունից (Կարադաշ, Սիդնախ), 58—66:

Անա Բաբյան, Թեյմուրազ I-ի կնիքները, 69—72:

Օրաբ Յիւրիշվիլի, Արաքական տիրապետության դեմ վրաց ժողովրդի ազատագրական շարժման պատմությունից (ըստ Ահմադ իբն Ասամ ալ-Քուֆի հաղորդումների), 73—82:

Գալա Ջաֆարիև, Ցահյա Անտիոքացու «Պատմությունում» մի տեղանվան մասին [գտնում է, որ Տալեի Դավիթ կյուրապաղատի պալատը գտնվել է Ուլտիրում (Սլիթի) և «Պատմությունում» մեջ հիշատակված անվանման «ալ-թալա» ընթերցումը (Վ. Ռ. Ռոզեն, Ի. Ցուրաշկովսկի, Ա. Ա. Վադիլև) պիտի սրբագրել «Ուլթա»], 83—87:

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 228—238: